ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2017թ. N------Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ
ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 594-րդ հոդվածով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ և 44-րդ կետերով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.18՝ 66.4 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0137 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ապրես Հովհաննիսյանին։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը համարվող Մարգարյան փողոցի հ.45 շենքի հ.18՝ 66.4քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Ապրես Հովհաննիսյանին:

Քննարկվող բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21072015-01-0137 վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Ապրես Հովհաննիսյանը՝ Երկրապահ կամավորականների միության անդամ է, հանդիսանում է Արցախյան պատերազմի ակտիվ մասնակից: Նա 1989 թվականին կազմավորել է «Սյունիք» կամավորականների ջոկատը և մինչև 1993 թվականը մասնակցել է Սիսիանի, Վայքի, Գորիսի, Նոյեմբերյանի, Իջևանի շրջաններում ընթացող ինքնապաշտպանական մարտերին, այնուհետև անցել է ծառայության ՀՀ պաշտպանության նախարարությունում՝ որպես հրետանու դիվիզիոնի պետի տեղակալ՝ մասնակցելով Հադրութի և Ֆիզուլիի տարածքներում ընթացող մարտական գործողություններին: Երկու անգամ ստացել է ծանր վիրավորում, սակայն ապաքինվելուց հետո անմիջապես վերադարձել է մարտի դաշտ, հանդիսանում է 3-րդ կարգի զինհաշմանդամ:

Հարկ է նշել, որ վերջինս, ինչպես նաև նրա որդին՝ Արշակ Հովհաննիսյանը հանդիսանում են նաև 2016 թվականի ապրիլ ամսվա ընթացքում ԼՂՀ-ում տեղի ունեցած մարտական իրադարձությունների, ինչպես նաև դրանից հետո շփման գծում կազմակերպվող անվտանգության ապահովման գործողությունների ակտիվ մասնակիցներ:

Ապրես Հովհաննիսյանը պարգևատրվել է ՀՀ և ԼՂՀ Նախագահների մարտական ծառայության մեդալներով, ՀՀ պաշտպանության նախարարության «Մարշալ Հ.Քաղրամյան» «Դրաստամատ Կանայան», «ՀՀ զինված ուժեր 20 տարի», «Անդրանիկ Օզանյան», Երկրապահ կամավորականների միության «5-րդ բրիգադ 20 տարի» և «ԵԿՄ 20 տարի» մեդալներով:

Ապրես Հովհաննիսյանը 11 անձով՝ ինքը, կինը, երկու տղաներն իրենց ընտանիքներով համատեղ բնակվում են Բաշինջաղյան փողոցի հ.169 շենքի հ.7 բնակարանում:

Հաշվի առնելով նրա մարտական ուղին, ինչպես նաև բնակարանային պայմանների բարելավման անհրաժեշտությունը՝ մշակվել է ավագանու որոշման սույն նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ **Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ